ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԻՐԱՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 02.05.2025Թ. N ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/02-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Իջևան «05» օգոստոսի 2025թ.

«ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը», ի դեմս գլխավոր քարտուղար Արման Գևորգյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԽԱՉՄԻՇԵԻՆ ՍՊԸ-ն և ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՍՊԸ ՀԳ-ն, ի դեմս տնօրեն-լիազորված անձ Խաչատուր Համզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 02.05.2025թ. թիվ ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/02-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.16 կետերը, և ՀՀ կառավարության 17.07.2025թ. թիվ 980-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով՝ Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել սույն Պայմանագրի N 1 հավելվածով (1-ին չափաբաժնի թիվ 1 Հավելվածով) նախատեսված ծավալաթերթի աշխատանքների յոթանասուն (70) տոկոսը՝ համաձայն Պայմանագրով նախատեսված 1-ին չափաբաժնի օրացուցային գրաֆիկին համապատասխան, որի կատարման վերջնաժամկետը սահմանվում է 22.12.2025թ.:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կապալառուի կողմից կատարված աշխատանքի գինը կազմում է ***138 600 000 (Մեկ հարյուր երեսուն միլիոն վեց հարյուր հազար)*** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, որը կազմում է Պայմանագրի գնի յոթանասուն տոկոսը, որի վճարումն իրականացվելու է սույն համաձայնագրի թիվ 1 Հավելվածին՝ Վճարման ժամանակացույցին, համապատասխան: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, Աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված՝ 2 էջից, սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ	«ԽԱՉՄԻՇԵԻՆ ՍՊԸ և
ք. Իջևան, Սահմանադրության 1	ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՍՊԸ» ՀԳ
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ վարչություն	ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան,
07628257	Նալբանդյան 1/5
900371002917	ՀՎՀՀ՝ 07613551
	Հ/Հ՝ 22 010 333 034 0000
	Բանկ՝ <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>
	ԲԲԸ Իջևանի մ/ճ
---------- Արման Գևորգյան	Տնօրեն-լիազորված անձ՝ Խաչատուր Համզյան
(ստորագրություն)	----------
Կ.Տ.	(ստորագրություն)
	Կ.Տ

Հավելված 1
«05» օգոստոսի 2025թ. կնքված
ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/02-1-1 ծածկագրով համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակ (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142 /501	Ընդհանուր շինարարական աշխատանքներ /Կիրանցի ոռոգման համակարգ	69300000	69300000	69300000	138600000	138600000	138600000	138600000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ
ք. Իջևան, Սահմանադրության 1
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ վարչություն
07628257
900371002917

---------- Արման Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԽԱՉՄԻՇԵԻՆ ՍՊԸ և ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՍՊԸ» ՀԳ
ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան,
Նալբանդյան 1/5
ՀՎՀՀ՝ 07613551
Հ/Հ՝ 22 010 333 034 0000
Բանկ՝ <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>
ԲԲԸ Իջևանի մ/ճ

Տնօրեն-լիազորված անձ՝ Խաչատուր Համզյան

(ստորագրություն)
Կ.Տ